



ՎԱՆԱԶՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ “ՕՐՀՈՒՄ” ԿԵՆՏՐՈՆ  
VANADZOR PUBLIC ENVIRONMENTAL  
INFORMATION “AARHUS” CENTER

№ Վ-005/2014

20 նոյեմբերի, 2014թ.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղեկատվությունն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ, 27.1-րդ հոդվածների, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ Վանաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն 2015 թ-ին Լոռու մարզում նախատեսված բնապահպանական ծրագրերի և դրանց բյուջեյի վերաբերյալ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի –րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվությունն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30 օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկատվությունն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Վերոհիշյալ տեղեկությունները կարող եք ուղարկել նաև էլեկտրոնային փոստով՝ [info\\_vanadzor@aarhus.am](mailto:info_vanadzor@aarhus.am) հասցեով:

(Պատրաստ եմ վճարել մեզ տրամադրված տեղեկատվության պատճենահանման ծախսերը: Պատճենահանման հնարավոր ծախսերի համար խնդրում եմ նամակով

մեզ տրամադրել նախարարության հաշվեհամարը և պատճենահանման  
ծախսաչափը՝ սկսած 11-րդ էջից):

Կանխավ շնորհակալություն:

Վանաձորի բնապահպանական  
տեղեկատվության հասարակական  
Օրհուս կենտրոնի համակարգող



Պերճ Բոջուկյան